ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Բարձրագույն կրթության դաշնային պետական բյուջետային
ուսումնական հաստատություն
**Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի
տնտեսագիտական համալսարանի
Երևանի մասնաճյուղ**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

# «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

**նվիրված**

**Գևորգ Անդրեյի Վարդանյանի**

***ծննդյան 100-ամյակին***

***- հայ ժողովրդի նշանավոր զավակ,***
***խորհրդային և համաշխարհային***
***հետախուզության լեգենդ,***
***Հայրենական Մեծ պատերազմի մասնակից,***
***Խորհրդային Միության հերոս***

***1943** թ. վերջին Գևորգ Վարդանյանի հետախուզական խումբն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Թեհրանում հակահիտլերյան կոալիցիայի երկրների (ԽՍՀՄ, Մեծ Բրիտանիա և ԱՄՆ) առաջնորդների անվտանգության ապահովման գործում: Վարդանյանն ընդամենը 19 տարեկան էր: Նրա հետախուզական խմբին հաջողվում է խափանել **Ի. Ստալինի, Վ. Չերչիլի և Ֆ. Ռուզվելտի** դեմ մահափորձի ծրագիրը, որը նախապես ծրագրվել և նախապատրաստվել էր գերմանական հետախուզության կողմից: Հայրենական Մեծ պատերազմի պատմության այս եզակի էջին է նվիրված լեգենդար «Թեհրան 1943» ֆիլմը:*

Երևան
Փետրվարի 27, 2024 թ.

Տեղեկատվական նամակ

**Հարգելի ուսանողներ,**

Գ. Վ. Պլեխանովի անվ. Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երևանի մասնաճյուղը հրավիրում է մասնակցելու **«Հայկական հետքը Հայրենական Մեծ պատերազմում»** միջազգային գիտաժողովին, որը նվիրված է հայ ժողովրդի ականավոր զավակ, խորհրդային և համաշխարհային հետախուզության լեգենդ, Հայրենական Մեծ պատերազմի մասնակից, ԽՍՀՄ հերոս՝ Գևորգ Վարդանյանի ծննդյան 100-ամյակին:

**Գիտաժողովի նպատակն է** ընդլայնել գիտական շփումները, խթանել ուսումնական հաստատությունների միջև համագործակցությունը, ուսանողների շրջանում հարստացնել Հայրենական Մեծ պատերազմի պատմության վերաբերյալ գիտելիքները, աջակցել ուսանողության գիտահետազոտական գործունեությանը, ընդգծել և լուսաբանել հայ ժողովրդի ներդրումը Հայրենական Մեծ պատերազմի փառավոր հաղթանակի կերտման գործում:

Գիտաժողովին հրավիրվում են մասնակցելու քոլեջի, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ, ասպիրանտներ:

Զեկույցներն անհրաժեշտ է ուղարկել erevan.marketing@rea.ru էլեկտրոնային հասցեին մինչև 19.02.2024 թ., նամակի թեմայում խնդրում ենք նշել գիտաժողովի անվանումը:

Գիտաժողովին մասնակցությունն անվճար է:

Զեկույցի տևողությունն է՝ 15 րոպե:

***Գիտաժողովի կազմակերպիչ*** `Գ. Վ. Պլեխանովի անվ. ՌՍՀ Երևանի մասնաճյուղ

***Ամսաթիվ և ժամ*** ` 27.02.2024 թ., ժամը 12: 00 (Երևանի ժամանակով)

***Վայրը***՝ Գ. Վ. Պլեխանովի անվ. ՌՏՀ Երևանի մասնաճյուղ

***Հասցե***՝ ք. Երևան, Արզումանյան 5, 2 մասն.

***Մասնակցության ձևը*** ` առկա, հեռակա:

***Գիտաժողովի լեզուն*** ` հայերեն, ռուսերեն, անգլերեն

***Կոնտակտային տվյալներ***՝ Հեռ.՝ +37410380345,

***Էլ. փոստ***՝ erevan.marketing@rea.ru

Գիտաժողովի հիմնական թեմատիկ ուղղություններն են:

- Վարդանյան Գ.Ա. – Հայրենական Մեծ պատերազմի լեգենդար հետախույզ, "մեծ եռյակի" փրկիչ:
- Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմում:
- ԽՍՀՄ-ի հայ մարշալները, նրանց ներդրումը ֆաշիզմի դեմ հաղթանակի գործում:
- Հայրենական Մեծ պատերազմի հայկական դիվիզիաները:
- Հայ կանայք Հայրենական Մեծ պատերազմում:

***Բանախոսներին կտրամադրվի մասնակցության ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ***

**Հավելված**

## Գիտաժողովի մասնակցության հայտ

| | |
|---|---|
| Ազգանուն, անուն, հայրանուն | |
| ԲՈՒՀ-ի անվանումը | |
| Ուսուցման ուղղություն | |
| Կուրս | |
| Ելույթի թեմատիկ ուղղությունը | |
| Հեռախոս (Բջջային) | |
| E-mail | |
| Զեկույցի անվանումը | |
| Ելույթի համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները | |